ծած, տեղափոխում է նրան Պարսկաստան, ուր ապրում էր նա անյայտութեան մէջ, Որսորդի անոան ներքոյ: Իմ քեռի Պետրոսը ծպտեալ Որսորդի պատմութիւնը հասցրեց մինչեւ այստեղը, էլ ուրիշ ոչինչ չասաց: Բայց այժմ ծերունի քրդի պատմութիւնից երեւաց, որ նա կրկին յայտնոել է իր իսկական Մելիք-միսաք անունով եւ, հայոց կամաւոր զօրքերի գլուխն անցած, կռոել է երկու քուրդ բռնապետների հետ, երկուսին էլ յաղթել է եւ, կալանաւորելով, յանձնել է Օսման փաշայի ձեռքը եւ իր «վրէժը» առել է: Ի՞նչ վրէժ: Երբ այդ մասին հարցրի, ծերունի քուրդը պատասխանեց.

— Բեդիր-խան-բեկը նոյն դաւաճանութեամբ վարոեցաւ իր բարեկամ Մելիք-Միսաքի հետ, որպէս իր հօր եղբայր Խան-Մահմուդը՝ Միր-Մարտոյի հետ: Երկուսն էլ խաբէութեամբ ոչնչացրին իրանց լաւ դաշնակիցներին եւ տիրեցին նրանց բերդերին: Մելիք-Միսաքը Սասունի եւ Մոգաց երկրի իշխանն էր եւ լաւ բարեկամ Բեդիր-խան-բէկի հետ: Բայց այդ վերջինը այնքան ցած, այնքան վատ գտնոեցաւ, որ մի գիշեր անակնկալ կերպով յարձակոեցաւ նրա տան վրայ եւ բոլորին սրից անցկացրեց: Մելիքին նոյնպէս սպանոած էին համարում, բայց տարիներից յետոյ կարծես գերեզմանից վերադարձաւ նա եւ իր վրէժը առեց...

Երկու հայ իշխաններ, մէկը՝ Ոստանի տէրը, միւսը՝ Սասունի տէրը, միեւնոյն ճակատագրական հարոածքի տակ խորտակոել էին, երկուսն էլ ստոր դաւաճանութեան զոհ էին դարձել: Ասլանը, երեւի, գիտէր այդ բոլորը. նա ոչինչ չէր խօսում, միայն լռութեամբ լսում էր ծերունի քրդի խոստովանութիւնը, որը, դառն փորձերից խրատոած, խօսում էր մեզ դառն ճշմարտութիւններ...

— Տեսնո՞ւմ ես, քրիւայ, — վերջապէս խօսեց Ասլանը, — դուք ձեր բարեկամներին ու դաշնակիցներին այդպէս վատութեամբ ոչնչացնելով՝ ինքներդ միայնակ ու անզօր մնացիք եւ դուք էլ ոչնչացաք: Դուք խաբէութեամբ տիրեցիք ձեր բարեկամների ամրոցներին, բայց ձեր ձեռքումն էլ չմնացին նրանք, եկաւ օսմանցին եւ խլեց ձեզանից: Եթէ դուք հաշտ մնայիք, դրանցից եւ ոչ մէկը չէր պատահի:

Ասլանը ծերունի քրդի, այդ անբախտացած ազնոականի, սրտիցն էր խօսում: Նրա վշտահար դէմքն աւելի մռայլոեցաւ, աւելի թախծալի կերպարանք ստացաւ:

— Ճշմարի՛տ է, շատ ճշմարի՛տ, — պատասխանեց նա տխուր ձայնով: — Մենք մեր ձեռքով մեր տունը քանդեցինք... Բայց ո՞վ կռոացրեց մեզ, ո՞վ բարեկամների ու դաշնակիցների մէջ երկպառակութիւն սերմանեց: Նոյնիսկ օսմանցին: Ես բոլորը չպատմեցի ձեզ, պարոն, թէ ինչպէս օսմանցի